ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

06 օգոստոսի 2026 թվականի թիվ 92-Ա

ք. Երևան

«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի հուլիսի 13-ին սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 22 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթների շրջանակում 2026 թվականի հուլիսի 08-ից 10-ն իրականացրել է «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «ԿԵՆՏՐՈՆ» տեսալսողական ծրագրի 2026 թվականի հուլիսի 06-ից 08-ն ընկած ժամանակահատվածի տեսագրությունների մշտադիտարկում:

Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթի պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ, և 2026 թվականի հուլիսի 13-ին կազմվել է տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն)**:**

Ըստ Արձանագրության՝ Հեռարձակողի լրատվական հաղորդումներում (յուրաքանչյուր օր 5 լրատվական հաղորդումներում) նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը գերազանցել է հաղորդման եթերաժամի 25 տոկոսը: Մասնավորապես՝ Գագիկ Ծառուկյանի տան, իրեն պատկանող ընկերություններում խուզարկությունների և ձերբակալության լուսաբանումը լրատվական հաղորդման ժամանակ կազմել է հաղորդման եթերաժամի՝

06.07.2026թ.

- 75,5% (ժամը 11:30:44 - 11:51:59 և 11:58:52 - 11:59:44, 22ր 07վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 11:30:39 – 11:59:57, 29ր 18վ,
- 58% (ժամը 13:30:48 - 13:45:18 և 13:56:06 - 13:56:52, 15ր 16վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 13:30:42 – 13:57:00, 26ր 18վ,
- 55,7% (ժամը 17:30:37 - 17:49:30, 18ր 52վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 17:30:34 – 18:04:24, 33ր 50վ,
- 60,4% (ժամը 19:30:34 - 20:06:47, 36ր 13վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 19:30:24 – 20:30:24, 60ր,
- 53,9% (ժամը 21:30:34 - 21:36:40 և 21:38:59 - 21:50:17, 17ր 24վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 21:30:27 – 22:02:42, 32ր 15վ,

07.07.2026թ.

- 66% (ժամը 11:30:36 - 11:38:11 և 11:48:02 - 12:00:16, 19ր 49վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 11:30:29 – 12:00:29, 30ր,

- 35,57% (ժամը 13:30:36 - 13:32:21, 13:35:47 - 13:38:49 և 13:44:45 - 13:49:10, 9ր 12վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 13:30:28 – 13:56:20, 25ր 52վ,

- 53,3% (ժամը 17:30:39 - 17:39:36, 17:40:14 - 17:46:07 և 17:46:09 - 17:49:12, 17ր 53վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 17:30:28 – 18:04:00, 33ր 32վ,

- 61% (ժամը 19:30:42 - 19:42:21, 19:43:00 - 19:51:05, 19:58:30 - 20:01:04 և 20:08:38 - 20:11:20, 24ր 58վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 19:30:32 – 20:11:28, 48ր 56վ,

- 54,5% (ժամը 21:30:40 - 21:47:41 և 21:55:41 - 21:58:13, 19ր 33վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 21:30:30 – 22:06:20, 35ր 50վ,

08.07.2026թ.

- 54,5% (ժամը 01:31:33 - 01:48:35 և 01:56:35 - 01:59:06, 19ր 33վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 01:31:24 – 02:07:14, 35ր 50վ,

- 54,5% (ժամը 03:36:04 - 03:53:05 և 04:01:04 - 04:03:36, 19ր 33վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 03:35:54 – 04:11:44, 35ր 50վ,

- 54,5% (ժամը 08:29:19 - 08:46:20 և 08:54:20 - 08:56:52, 19ր 33վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 08:29:10 – 09:05:00, 35ր 50վ,

- 64,9% (ժամը 11:31:44 - 11:40:25 և 11:45:05 - 11:54:10, 17ր 46վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 11:30:32 – 11:57:55, 27ր 23վ,

- 60% (ժամը 13:32:32 - 13:41:16 և 13:47:35 - 13:56:42, 17ր 51վ), լրատվական հաղորդման տևողությունը՝ 13:31:05 – 14:00:48, 29ր 43վ:

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

Վերոնշյալը պարունակում է Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթի խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2026 թվականի հուլիսի 13-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 22 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված թիվ 22 վարչական վարույթի վերաբերյալ 2026 թվականի հուլիսի 14-ի թիվ Ե/04/04.1/491-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին՝ ի թիվս այլնի հայտնելով, որ Հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 16-ի թիվ 37-Ա որոշմամբ Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի խախտման համար Հեռարձակողի նկատմամբ արդեն իսկ կիրառվել է վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում, իսկ Արձանագրության համաձայն՝ Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը կրկին գերազանցել է հաղորդման եթերաժամի 25 տոկոսը: Հետևաբար, արձանագրված տվյալները կարող են վկայել վարչական տույժ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն խախտումը կրկին կատարելու մասին և նախնական գնահատմամբ պարունակել Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտման հատկանիշներ: Նույն ծանուցմամբ Հեռարձակողին առաջարկվել է սույն հարցի վերաբերյալ ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հեռարձակողը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 04.08.2026թ. ներկայացրել է դիրքորոշում, որում մասնավորապես նշել է.

«Այն գրությունը, որն ուղարկվել է ինձ և որով տեղեկացվում է վարույթի հարուցման մասին, արդեն իսկ թվարկում է երեք առանձին թեմա՝ փուն, ընկերություններ և ձերբակալություն: Գրության մեջ նշված է. «Գագիկ Ծառուկյանի տան, իրեն պատկանող ընկերություններում կատարված խուզարկությունների և ձերբակալության լուսաբանումը»:

Ես առարկում եմ հարուցված վարույթին, որովհետև, լուսաբանումը բացարձակապես չի վերաբերում մեկ անձի: Մշտադիտարկման ժամանակահատվածում «Կենտրոն» հեռուստաընկերությունը լուսաբանել է պետական վեց մարմնի գործողություն՝ ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Երևանի քաղաքապետարանի, Երևանի կենդանաբանական այգու և ՀՀ գլխավոր դատախազության, ինչպես նաև. «Մուլտի Գրուպ» կոնցեռնի շուրջ 70 ձեռնարկությունում իրականացված խուզարկությունները և մի շարք տնօրենների բնակարաններում կատարված խուզարկությունները:

Տեղում իրադարձությունը լուսաբանել են շուրջ մեկ տասնյակ լրատվամիջոցներ, որոնք ճեպազրույցի ընթացքում հարցեր են ուղղել համապատասխան անձանց: Հետևաբար, առկա են եղել թե հարցեր, թև հանրային պահանջ: Լրատվամիջոցների այդ քանակի ներկայությունը (իսկ ուղիղ եթեր են հեռարձակել ավելի քան երկու տասնյակ լրատվամիջոցներ) փաստում է, որ առկա է հանրային հետաքրքրություն և պետության կողմից իրականացվող գործողությունների նկատմամբ:

Ըստ նախնական խմբագրական պլանավորման՝ «Կենտրոն» հեռուստաընկերությունը ոչ հուլիսի 6-ին, ոչ հուլիսի 7-ին, ոչ հուլիսի 8-ին հրապարակային տեղեկություն և, հետևաբար, նաև պլանավորում չի ունեցել ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանին լուսաբանելու վերաբերյալ: Հետևաբար, լրատվական թողարկումների բովանդակությունը պայմանավորված է եղել պետական մարմինների գործողություններով: Եթե խուզարկություն իրականացվեր Գագիկ Ծառուկյանի բնակարանում կամ, օրինակ, ՀՀ իքս քաղաքացու ձեռնարկություններում, ապա լուսաբանումը նույն կերպ կկատարվեր. լուսաբանվել են պետական կառույցների իրականացրած գործողություններն այնտեղ, որտեղ դրանք տեղի են ունեցել:

Շուրջ 70 ձեռնարկություններում իրականացված խուզարկությունների մասին պաշտոնապես հայտնել է ՀՀ քննչական կոմիտեն: Նաև հետաքրքիր է, թե ինչ հիմքով է ՀՌՀ-ն «Մուլտի Ուելնես»-ում, «Երևանի «Արարատ» կոնյակի-գինու-օղու կոմբինատ»-ում, «Արարատցեմենտ»-ում և «Օլիմպավան»-ում իրականացված խուզարկությունների լուսաբանումը համարել Գագիկ Ծառուկյանի լուսաբանում:

Ի դեպ, նույն օրը պետական բարձրաստիճան պաշտոնյան այցելել է Իրան, այնուհետև՝ Ռուսաստան: Քանի որ պաշտոնյան այցելել է երկու երկիր, լուսաբանվել է նրա այցը երկու երկիր: Եթե այցելած լիներ մեկ երկիր, կլուսաբանվեր մեկ երկիր այցը: Նույն տրամաբանությամբ, եթե պետական մարմինները գործողություններ են իրականացրել բազմաթիվ վայրերում, լրատվամիջոցը լուսաբանել է այդ գործողությունների վայրերը:

ՀՌՀ անդամները, որոնք ունեն հարուստ կենսափորձ, վստահ եմ, գիտեն, որ սա մասնավոր միջոցառում չէր և ոչ էլ որևէ անձի մեծարման երեկո: Եթե պետության վեց և ավելի կառույցներ միաժամանակ իրականացրել են լայնածավալ և աննախադեպ գործողություններ, ապա լուսաբանվել են հենց այդ պետական կառույցների գործողությունները: Եթե նույն գործողություններն իրականացված լիներին, օրինակ, Պողոս Պետրոսյանի բնակարանում կամ նրան առնչվող ձեռնարկություններում, դրանք ևս կլուսաբանվեին նույն սկզբունքով՝ որպես պետական մարմինների իրականացրած գործողություններ:

Այլ առարկություններ, հիմնավորումներ, համեմատականներ և զուգահեռներ կներկայացնեմ 2026 թվականի օգոստոսի 6-ին հրավիրված նիստի ընթացքում՝ բանավոր ընթացակարգով:»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմին՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.

Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 տոկոսը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը տեսալսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել Օրենքով սահմանված պահանջները:

Այսպես, քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2022 թվականից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող (լիցենզիայի սերիան և համարը՝ ԵՀ N 345, գործողության ժամկետը՝ 24.12.2022թ.-24.12.2029թ., սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն):

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ի թիվս

այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթը:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ Հանձնաժողովն արձանագրում է.

«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության կողմից հեռարձակվող «ԿԵՆՏՐՈՆ» տեսալսողական ծրագրի՝ 2026 թվականի հուլիսի 06-ից 08-ն ընկած ժամանակահատվածի լրատվական հաղորդումներում նույն թեմայի՝ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ նախաձեռնված քրեական վարույթի և դրա շրջանակում իրականացված վարութային գործողությունների, մասնավորապես՝ նրա տանը և նրան պատկանող կամ նրա հետ կապված ընկերություններում իրականացված խուզարկությունների և ձերբակալման լուսաբանումը գերազանցել է հաղորդման եթերաժամի 25 տոկոսը, ինչը հանդիսանում է Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի խախտում:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորումն ինքնանպատակ չէ, այլ նպատակ ունի ապահովել լրատվական ծրագրերի թեմատիկ բազմազանությունն ու տեղեկատվական բազմակարծությունը և սահմանափակել լրատվական հաղորդումներում մեկ թեմայի կամ իրադարձության գերակշռող ներկայացումը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի ներկայացրած բացատրությունները, որոնց համաձայն՝ Արձանագրությունում նշված ժամանակահատվածում Հեռարձակողը լուսաբանել է պետական վեց մարմնի՝ ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Երևանի քաղաքապետարանի, Երևանի կենդանաբանական այգու և ՀՀ գլխավոր դատախազության գործողությունները, ինչպես նաև «Մուլտի Գրուպ» կոնցեռնի շուրջ 70 ձեռնարկություններում և մի շարք տնօրենների բնակարաններում իրականացված խուզարկությունները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողի ներկայացրած բացատրությունները ոչ միայն չեն հերքում Արձանագրությամբ նույն թեմայի լուսաբանման վերաբերյալ արձանագրված հանգամանքները, այլև հաստատում են, որ լուսաբանված իրադարձությունները միմյանցից անկախ առանձին թեմաներ չեն եղել: Հեռարձակողն իր բացատրություններում նկարագրում է Գագիկ Ծառուկյանի նկատմամբ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում տարբեր պետական մարմինների կողմից տարբեր վայրերում իրականացված փոխկապակցված գործողությունները, մասնավորապես՝ նրա տանը, նրան պատկանող կամ նրա հետ առնչվող ընկերություններում և մի շարք տնօրենների բնակարաններում իրականացված խուզարկությունները, ինչպես նաև Գագիկ Ծառուկյանի ձերբակալությունը:

Տարբեր պետական մարմինների ներգրավվածությունը, գործողությունների կատարման վայրերի բազմազանությունը կամ դրանց առանձին դրվագներով ներկայացումը չեն փոխում դրանց բովանդակային և փաստական միասնականությունը, քանի որ դրանք իրականացվել են նույն քրեական վարույթի շրջանակում և կազմել են նույն իրադարձության զարգացման փոխկապակցված դրվագներ:

Հեռարձակողի այն պնդումը, թե լուսաբանումը չի վերաբերել մեկ անձի, Հանձնաժողովի գնահատմամբ, չի կարող ընդունվել: Թեև լուսաբանված գործողությունները կատարվել են

տարբեր պետական մարմինների կողմից և տարբեր անձանց ու կազմակերպությունների առնչությամբ, դրանց ընդհանուր փաստական և վարութային հիմքը եղել է Գագիկ Ծառուկյանի նկատմամբ նախաձեռնված նույն քրեական վարույթը: Հեռարձակողի լրատվական հաղորդումներում լուսաբանման առանցքում եղել են Գագիկ Ծառուկյանը, նրա նկատմամբ նախաձեռնված քրեական վարույթը և այդ վարույթի շրջանակում իրականացված փոխկապակցված վարութային գործողությունները:

Լուսաբանման թեման որոշվում է ոչ թե դրանում հիշատակված պետական մարմինների, անձանց, կազմակերպությունների կամ գործողությունների կատարման վայրերի քանակով, այլ լուսաբանված իրադարձությունների ընդհանուր փաստական հիմքով, դրանց փոխադարձ կապով և լուսաբանման ընդհանուր առարկայով: Հետևաբար, Հեռարձակողի բացատրություններում թվարկված գործողությունները չեն հանդիսացել միմյանցից անկախ առանձին թեմաներ, այլ կազմել են Գագիկ Ծառուկյանի նկատմամբ նախաձեռնված նույն քրեական վարույթի և դրա շրջանակում իրականացված գործողությունների միասնական լուսաբանում, որն Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառման իմաստով համարվում է նույն թեմայի վերաբերյալ լուսաբանում:

Ըստ Հեռարձակողի՝ դեպքի վայրում իրադարձությունը լուսաբանել են շուրջ մեկ տասնյակ լրատվամիջոցներ, ինչը վկայում է պետության կողմից իրականացվող գործողությունների նկատմամբ հանրային հետաքրքրության առկայության մասին: Հանձնաժողովը չի վիճարկում, որ լուսաբանված իրադարձությունները կարող էին հանրային հետաքրքրություն ներկայացնել: Հանրային հետաքրքրությունը կարող է պայմանավորել թեմայի ընտրությունը և դրա լուսաբանման անհրաժեշտությունը, սակայն այն ինքնին չի ազատում Հեռարձակողին Օրենքով սահմանված պահանջները պահպանելու պարտականությունից և չի կարող արդարացնել այդ պահանջների խախտումը:

Հանձնաժողովն արձանագրում է՝ Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջը կիրառելի է նաև հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների լուսաբանման դեպքում: Հետևաբար, իրադարձության նկատմամբ հանրային հետաքրքրության առկայությունը չի բացառում Օրենքի պահանջի խախտման փաստի արձանագրումը և դրա համար Օրենքով նախատեսված վարչական տույժի կիրառումը:

Ուստի Հեռարձակողի ներկայացրած բացատրությունները չեն հերքում Արձանագրությամբ հաստատված հանգամանքները և հիմք չեն տալիս Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի խախտումը չարձանագրելու կամ Հեռարձակողի նկատմամբ Օրենքով նախատեսված վարչական տույժը չկիրառելու համար:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Սույն վարչական վարույթի շրջանակում էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ Հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 16-ի թիվ 37-Ա որոշմամբ Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի խախտման համար Հեռարձակողի նկատմամբ արդեն իսկ կիրառվել է Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում:

Ուստի Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է նույն խախտումը, այն է՝ Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը գերազանցել է հաղորդման եթերաժամի 25 տոկոսը, ինչը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտման հատկանիշներին:

Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստացած անձի կողմից նախազգուշացմամբ նշված ժամկետում սահմանված պահանջը չկատարելը կամ նախազգուշացման համար հիմք դարձած նույն խախտումը սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, 10-րդ հոդվածի 7-րդ մասը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ և 9-րդ մասերը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ղեկավարվելով Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. օգոստոսի 06
ք.Երևան